ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄ

Վերջերս մեր գրախանութներում երևաց Գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի նվան գրականության ինստիտուտի գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Սուրեն Շտիկյանի «Հայ նոր գրականության ժամանակագրություն (1801-1850)» խորագիրը կրող աշխատությունը: Ինչպես հայտնի է, չնայած մեր ժողովրդի բազմադարյա գրական անցյալին և շուրջ հիսուն հազարի հասնող այլևայլ բնույթի մեծ ու փոքր աշխատություններին, ժամանակագրական, մատենագիտական, տարեգրական բնույթի գործերը համեմատաբար փոքր քանակություն են կազմում: Ավելին. նրանց քանակությունն այնքան փոքր է, որ առանց հեռուստադիտողներից շատ ժամանակ խլելու, պարզապես կարելի է բոլորը թվարկել: Ընկեր Շտիկյանի աշխատությունը գալիս է ինչ-որ չափով լրացնելու այս բացը և նրա հեղինակի կարողությունների ու հնարավորությունների սահմաններում՝ շարունակելու ու զարգացնելու այն կարևոր գործը, որը նշանավորվում է Գարեգին Զարբհանալյանի, Արսեն Ղազիկյանի, Գարեգին Լևոնյանի, Հակոբ Անասյանի և ուրիշների անուններով:

Սուրեն Շտիկյանի «Հայ նոր գրականության ժամանակագրությունը» ըստ ամենայնի ներկայացնելու ու միաժամանակ այդ աշխատանքի հետ կապված մի քանի հարցեր պարզաբանելու նպատակով, խմբագրությունը նպատակահարմար է գտել մեզ մոտ հրավիրել հեղինակին:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Ընկեր Շտիկյան, թույլ տվեք ձեզ դիմել անսպասելի հարցով. դուք գո՞հ եք ձեր աշխատանքից:

ՇՏԻԿՅԱՆ – Այս հարցին պատասխանելու համար նախ պետք է ասեմ, որ իմ «Ժամանակագրությունը» չի ծնվել մեկ տարում, կամ նույնիսկ մի քանի տարիների ընթացքում: Այդ հատորը, որ քիչ առաջ ներկայացվեց հեռուստադիտողներին, ավելի քան տասը տարվա աշխատանքի արդյունք է և, ավելացնեմ, ծանր աշխատանքի արդյունք: Ասեմ նաև, որ ամեն ինչ չանցավ այնքան հեշտ ու բնականոն, ինչպես սկզբում պատկերացնում էի ես: Իրեն զգացնել տվեց փորձի պակասը, այդ բնույթի որոշ մասնագիտական գիտելիքների սակավությունը: Եվ ահա, այդ բոլորից հետո, բազում-բազմապիսի դժվարություններ հաղթահարելուց հետո, երբ նայում եմ իմ «Ժամանակագրությանը», ճիշտն ասած, գոհ եմ մնում իմ աշխատանքից: Համենայն դեպս, մի բան վստահ կարող եմ ասել. արել եմ բացարձակապես այն ամենը, ինչ ի վիճակի էի անել և ինչ որ կա իմ հնարավորությունների ու կարողությունների սահմաններում:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Իսկ այդ բարդ թեման դուք ինքնե՞րդ էիք ընտրել ձեզ համար:

ՇՏԻԿՅԱՆ – Ոչ, «Ժամանակագրություն» թեման, առավել ևս այդ գաղափարը, ինձ տվել է գրականագետ Արամ Ինճիկյանը: Դա 1960 թվականի կեսերին էր: Կանչելով իր առանձնասենյակ, ընկ. Ինճիկյանը բացատրեց ինձ, որ 19-րդ դարի գրականության ժամանակագրությունը մնում է ամենահրատապ հարցերից մեկը և այդ գործի պակասը իրեն մեծապես զգացնել է տալիս: Նա էլ ինձ հորդորեց զբաղվել այդ գործով: Եվ մինչև հիմա էլ ընկ. Ինճիկյանը հոգածու կերպով հետևում է իմ աշխատանքներին և ըստ ամենայնի օգնում ու օժանդակում է ինձ: Ուզում եմ անպայման հիշատակել մեր ինստիտուտի Նոր գրականության ամբողջ բաժնի և բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Սերգեյ Սարինյանի հոգատար վերաբերմունքը իմ գործի հանդեպ:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Իսկ ինչպիսի՞ն պիտի լինի «Ժամանակագրության» հետագա ընթացքը:

ՇՏԻԿՅԱՆ – Ըստ իմ նախնական պլանավորման, «Հայ նոր գրականության ժամանակագրությունը» պետք է բաղկացած լինի չորս հատորներից: Առաջին հատորը՝ 1800-1850 թվականների ժամանակաշրջանն է, որն արդեն լույս է տեսել: Երկրորդ հատորը պետք է ընդգրկի 1850-1875 թվականները, երրորդը՝ 1875-1900 թվականները և, վերջապես, չորրորդը՝ 1900-1920 թվականները: Սա, կրկնում եմ, նախնական պլան է, և անակնկալները ամենևին էլ բացառված չեն: Բացառված չէ, օրինակ, որ հիշյալ ժամանակաշրջաններից մեկը կամ երկուսը նյութի առատության և բազմազանության հետևանքով դառնա երկու, անգամ երեք գիրք: Ինչպես դժվար չէ նկատել, աշխատանք դեռ շատ կա և այդ շատ աշխատանքի փոքր մասն է արված: Եվ եթե ես կարողանամ այդ մտահղացումն իրականացնել այն ձևով ու տարողությամբ, ինչպես արված է առաջին հատորում, այսինքն՝ կարողանամ ներկայացնել ամբողջ նոր գրականությունը թվերի ու փաստերի լեզվով, ապա կարծում եմ, որ կստացվի մի գործ, որի օգտակարությունը, երևի, վիճարկման հարց չի լինի:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Պետք է ենթադրել, որ դուք այժմ աշխատում եք «Ժամանակագրության» երկրորդ հատորի վրա:

ՇՏԻԿՅԱՆ – Այո, դուք ճիշտ կռահեցիք: Երկրորդ հատորը, ինչպես արդեն ասացի, ընդգրկում է մեր մշակութային կյանքի 1850-1875 թվականների ժամանակահատվածը: Իսկն ասած, հայ գրական, քննադատական, հասարակական-քաղաքական միտքը սկսվում է հենց այս ժամանակաշրջանից, և այն էլ, շեշտակի վերելքով: Բերեմ միայն մեկ օրինակ. եթե դարասկզբի ամբողջ հիսուն տարվա ընթացքում հայ ժողովուրդն ունեցել է շուրջ 6 անուն պարբերական, ապա հաջորդ քսանհինգ տարում հրատարակված պարբերականների թիվը արդեն հասնում է վաթսուն անունի: Այս համեմատությամբ էլ՝ աճ է նկատվում մեր գրական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում: Այդ բոլորն էլ, ահա, պետք է արտացոլվի իմ «Ժամանակագրության» երկրորդ հատորում: Աշխատանքները շարունակվում են երկրորդ գրքի վրա բավականին ինտենսիվորեն և ես կարծում եմ, որ այն կավարտեմ 1976 թվականի վերջերին:

ՀԱՂՈՐԴԱՎԱՐ – Մեզ մնում է հաջողություն ցանկանալ ձեզ:

ՇՏԻԿՅԱՆ – Շնորհակալություն:

1973 թ.